ՀՏԴ 33 (336.2) *Տնտեսագիտություն*

ԼՂՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

Լիլիկ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Բանալի բառեր. *հարկային համակարգ, հարկային ռիսկ, հարկային եկամուտներ, հարկային գործիքներ, հարկային մեխանիզմ, ներդրումներ,*

Ключевые слова. *налоговая система, налоговый риск, налоговые доходы, налоговые инструменты, налоговый механизм, инвестиции*

Key words: *tax system, tax risk, tax income, tax toolware, tax mechanism, investments*

ВЛИЯНИЕ НАЛОГОВОГО ПОЛЯ НКР НА БИЗНЕС СРЕДУ

Л.БЕГЛАРЯН

Влияние налоговой системы на бизнес-среду проблема не только в развитии экономики НКР. Сейчас оно стало фактором повышения мировой экономической конкуренции.

В работе обосновалась роль налоговой системы, оказывающей влияние на бизнес-среду НКР и были предложены пути ее развития. При помощи факторного анализа в отношении отдельных видов налогов, предложились механизмы, направленные на привлечение инвестиций и обеспечение экономического роста в областях экономики НКР.

INFLUENCE OF TAX FIELD OF NKR ON BUSINESS ENVIRONMENT

L. BEGARYAN

The impact of the tax system on business environment is of importance not only to the development of the economy of the Nagorno Karabakh Republic, but also it has become a factor of increasing competitiveness in the global economy.

The role of the tax system influencing on the NKR business environment has been fixed in the work and the ways have been proposed for the development of the tax system and the tax mechanisms have been proposed for attracting investments and for supporting the economical growth in the NKR economy.

Գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցությունը արդիական է ոչ միայն ԼՂՀ տնտեսության զարգացման գործում, այլ նաև դարձել է համաշխարհային տնտեսության մրցունակության բարձրացման գործոնը: Հիմնավորվել է ԼՂՀ գործարար միջավայրի վրա ազդող հարկային համակարգի դերը, առաջարկվել են ուղիներ հարկային համակարգի զարգացման համար, առաջադրվել են ներդրումների ներգրավման և ԼՂՀ տնտեսության ոլորտներում տնտեսական աճի ապահովման հարկային մեխանիզմներ:

ԼՂՀ տնտեսության զարգացման առջև կանգնած նոր մարտահրավերները պահանջում են գործարարության համար առավել բարենպաստ միջավայրի ձևավորում: Իսկ զարգացած և մրցունակ գործարար միջավայրի համար հիմնական երաշխիք է համարվում նպաստավոր հարկային դաշտի ստեղծումը, որը շարունակում է ընթանալ հետևյալ ուղղություններով. ներդրումային գործունեության և գործարարության խթանում, ստվերային տնտեսության կրճատում, ներքին շուկայի պաշտպանություն: Նշված նպատակների իրականացման համար ԼՂՀ կառավարության կողմից մշակվել է համապատասխան ռազմավարություն, որով նախատեսվում է հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, հարկային մարմինների գործունեության վերակազմակերպում, գործարարությամբ զբաղվելու նոր ընթացակարգերի ու հարկային հսկողության ժամանակակից կառուցակարգերի ներդրում և այլն:

Գործարար միջավայրի բարելավման առաջնային քայլը բիզնեսի ինստիտուցիոնալ մուտքի ու ելքի արգելքների կրճատումն է: ԼՂՀ-ում պետական գրանցում ստացող անհատ

ձեռնարկատերերն ու կազմակերպությունները հարկ վճարողի հաշվառման համարն այժմ ստանում են պետական ռեգիստրի միջոցով: Նրանք այլևս ստիպված չեն լինում նախկին ավելորդ քաշքշուկներով ձեռք բերել իրենց հաշվառման համարը: Հաշվառման կանգնելուց հետո առաջին մեկ տարվա ընթացքում հարկային մարմնի կողմից առնվազն երկու անգամ կազմակերպվում են օժանդակման այցելություններ նոր ստեղծված հարկ վճարողներին՝ վերջիններիս կողմից ցանկություն հայտնելու դեպքում[1]: 2016 թվականին մշակվել է «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգ», որի նպատակն է ապահովել հարկ վճարողներին բարձրորակ սպասարկմամբ, բացատրական աշխատանքների իրագործման միջոցով բարձրացնել նրանց իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ներկայացնել գործող հարկային և պարտադիր վճարների մասին օրենսդրության և դրանց հետ կապված այլ նորմատիվ ակտերի պահանջները: Նոր ստեղծված հարկ վճարողների մոտ հաճախ օրենսդրությամբ սահմանված հարկման պայմանների, սահմանային չափերի փոփոխությամբ պայմանավորված՝ նախկին հարկման ռեժիմից այլ հարկման ռեժիմին անցնելու հետ կապված, առաջանում են լրացուցիչ հարկային պարտավորություններ: Կանոնակարգը տնտեսավարող սուբյեկտներին թույլ է տալիս զերծ մնալ լրացուցիչ պարտավորություններից:

Վերջին տարիների բարեփոխումների փաթեթն առաջին հերթին ուղղված է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Ընդունվեց <Արտոնագրային վճարների մասին> ԼՂՀ օրենքը՝ ՓՄՁ-երի համար ստեղծելով հարկման հատուկ ռեժիմ: Փոքր ձեռնարկատիրական գործունեության համար փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացմամբ, պարզեցմամբ միասնականացվել են մի շարք հարկատեսակների հաշվարկման և վճարման, հաշվետվությունների ներկայացման ժամկետները: Անհատ ձեռնարկատերերին, որոնց նախորդ տարվա ընթացքում իրացման շրջանառությունը չի գերազանցել 36 մլն դրամը, և ովքեր չեն իրականացնում լիցենզավորման ենթակա գործունեություն և չունեն վարձու աշխատողներ, հնարավորություն է ընձեռվել հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկությունները ներկայացնել կիսամյակային պարբերականությամբ՝ ամսական կամ եռամսյակային պարբերականության փոխարեն: Արդյունքում 1300 անհատ ձեռնարկատերեր հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկությունները ներկայացնում են կիսամյակային պարբերականությամբ: Գործունեությունը նոր սկսող հարկ վճարողները 2016 թվականից եռամսյա ժամկետով ազատվում են առևտրի հարկի, հաստատագրված վճարի և արտոնագրային վճարի կատարումից: Արդյունքում թվով 1044 տնտեսավարող սուբյեկտներ ստացել են արտոնությունից օգտվելու հավաստագիր, որը նպաստում է սկսնակ տնտեսավարող սուբյեկտների ձեռնարկատիրության զարգացմանն ու կայացմանը, ինչպես նաև որոշակիորեն կրճատում է գործարարության ռիսկայնության մակարդակը գործունեության սկզբնական փուլում: Մոտեցումը նպաստում է ձեռնարկատիրական նախաձեռնություններին և խթանում գործարար ակտիվությունը:

Այսօր հարկային հսկողության գործընթացում ԼՂՀ-ում ներմուծվել է նոր, ժամանակակից գործիքակազմ, որը ենթադրում է ստվերային տնտեսության կրճատում, ակտիվ ու ազնիվ աշխատանքային գործունեության խրախուսում, հավասար մրցակցային միջավայրի ապահովում: Նշենք, որ արդարացի ու տնտեսապես հիմնավորված նման մեխանիզմի գործադրումը հստակեցրել է հարկատու-պետություն վստահության մթնոլորտը:

Կարևորելով ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարը՝ հարկային մարմինը որդեգրել է ստվերային տնտեսության կրճատման համար համապատասխան կարողություններ ի ձևավորման անհրաժեշտությունը, շեշտը դնելով հարկերի վճարումից խուսափելու

[1] Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգ»

դեպքերի բացահայտման վրա՝ մասնավորապես, առաջնային համարելով հարկային օրենսդրությունը կանխամտածված խախտողների նկատմամբ խիստ հսկողության իրականացումը: Մշակվել և 2016 թվականից գործի է դրվում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգը»՝ նպատակ ունենալով կոորդինացնել ու կանոնակարգել հարկային իրավախախտումների դեմ պայքարի միջոցառումների իրականացումը[1]:

Փաստաթղթաշրջանառության բարելավումը հանդիսանում է ստվերային տնտեսության կրճատման առավել արդյունավետ գործիքներից մեկը ամբողջ աշխարհում: Ձեռնարկատիրության օրինականության պահպանմանն է ուղղված «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով երկկողմանի հաշվարկային փաստաթուղթ չտրամադրելու կամ չպահանջելու դեպքում, անապրանք փաստաթուղթ տրամադրելու դեպքում տուգանքի կիրառման նորմերի սահմանումը: Միաժամանակ տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակների համար պարտադիր դարձավ ՀԴՄ-ի կիրառումը, խստացվեց նաև ՀԴՄ-ի կտրոնների չտրամադրման դեպքում նախատեսված տուգանքները (տուգանքի կիրառում, գործունեության կասեցում կամ լրացուցիչ տուգանքների վճարում և այլն): Հանրապետությունում ապրանքանյութական շարժը փաստաթղթավորելու նպատակով Հայաստանի Հանրապետությունից Արցախի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման փաստը հաստատող փաստաթղթերը (ներմուծման հայտարարագրերը) համարվում են ապրանքների ձեռք բերման համար կատարված ծախսերը հիմնավորող փաստաթուղթ, արդյունքում առևտրի հարկ վճարող և հաստատագրված վճար վճարող առևտուր իրականացնող տնտեսավարող սուբյեկտները ազատված են «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված հարկային գործակալի պարտավորություններից (չհիմնավորված վճարումներից օրենքով սահմանված է 10% դրույքաչափով եկամտային հարկ)[2]: Միևնույն ժամանակ ներդրվել է Արցախի Հանրապետություն ներմուծվող ապրանքանյութական արժեքների հաշվառման ընտրողականության սկզբունք, որով ուժեղացվել է գործընթացի հսկողությունն առավել ռիսկային ոլորտներում և բարձրացվել հետներմուծումային շղթայի հարկման արդյունավետությունը: Հսկիչ կետերում կապարակնքվում են ռիսկային ոլորտներ ապրանքներ ներմուծող տրանսպորտային միջոցները: «Հարկերի մասին» օրենքում կատարված փոփոխությամբ կանոնակարգվել է երրորդ անձանցից տեղեկությունների ստացման գործընթացը: Մինչ այդ օրենքով սահմանված չէր «երրորդ անձ» հասկացությունը, կարգավորված չէր նրանցից ստացվող տեղեկությունների իրացումը, որն էլ տնտեսավարող սուբյեկտների համար անհավասար մրցակցային դաշտ էր ստեղծում: Մշակվել է հարկային ստուգումների պլանավորման հայեցակարգ, որը ռիսկային չափորոշիչներով ստուգումների իրականացման համար հարկ վճարողների ընտրության գործընթաց է: Ստուգման ենթակա հարկ վճարողների հիմնավոր ընտրությունը իրականացվում է հարկային մարմնի կողմից ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող ամբողջ տեղեկատվության բազմակողմանի վերլուծությամբ: Ներքին աղբյուրներից ստացվող տեղեկատվություն է համարվում հարկային ծառայության գործառույթների շրջանակում հարկային մարմինների կողմից հարկատուների մասին ինքնուրույն ստացված տեղեկատվությունը: Արտաքին աղբյուրներից ստացվող տեղեկատվություն է համարվում մասնավորապես երրորդ անձանցից օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմինների կողմից հարկ վճարողների վերաբերյալ ստացված տեղեկությունները, ինչպես նաև այլ տեղեկատվությունը, այդ թվում՝ հանրամատչելի:

Ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության նպատակով ցուցանիշների վերլուծությունը ներառում է մի քանի փուլեր: Դրանք են՝

[1] «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգ»
[2] http/www.arlexis.am/

1) հաշվարկված հարկերի և դրանց դինամիկայի վերլուծություն, որոնք հնարավորություն են տալիս ի հայտ բերելու հաշվարկվող հարկերի գումարի նվազման դինամիկա ունեցող տնտեսավարող սուբյեկտներին,

2) օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերի և այլ վճարների ժամանակին և լիարժեք կատարումը վերահսկելու նպատակով՝ յուրաքանչյուր հարկատեսակի մասով վճարումների և դրանց դինամիկայի վերլուծություն,

3) նախորդ ժամանակաշրջանների համեմատ ընթացիկ ժամանակաշրջանում հարկ վճարողների գործունեության ցուցանիշների էական շեղումների կամ որոշակի ժամանակաշրջանում հարկ վճարողների հաշվետվությունների միջին վիճակագրական ցուցանիշներից շեղումների, ինչպես նաև տվյալների հակասության, և (կամ) հարկային մարմնում առկա տեղեկատվության անհամապատասխանության բացահայտման նպատակով հարկ վճարողների հաշվարկ-հաշվետվությունների ցուցանիշների վերլուծություն,

4) հարկման բազայի ձևավորման վրա ազդող գործոնների վերլուծություն:

Արդյունքում այսօր ընդհանուր մասսայական ստուգումներից անցում է կատարվում ռիսկային չափանիշների հիման վրա թիրախային ստուգումների համակարգին և փոքր սուբյեկտները զերծ են մնում հարկային ստուգումներից: Միաժամանակ հարկ վճարողը կարող է օգտվել ռիսկերի ինքնուրույն գնահատման իր իրավունքից և գնահատել հարկերի հաշվարկման ժամանակ թույլ տրված սխալների ինքնուրույն բացահայտման և ճշտման առավելությունները: Ընդհանրապես, 2015 թվականին 2013 թվականի համեմատ ռիսկային չափանիշներով ստուգումների թիվը նվազել է 19 տոկոսով, իսկ 2017 թվականի ինն ամիսների 369 հատ հարկային ստուգումներից ավելի քիչ գումարներ են հաշվարկվել, քան 2013 թվականի 367 հարկային ստուգումներից: Ցուցանիշները պայմանավորված են տնտեսավարող սուբյեկտների հարկային կարգապահության բարձրացմամբ: Իսկ 2016 թվականի 2014 թվականի համեմատ ստուգումների քանակի 6.5 տոկոսով աճը պայմանավորված է հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական աշխատանքների ուժեղացմամբ:

Աղյուսակ 1

2014-2016թթ. իրականացված ստուգումների քանակը և դրանց արդյունքում հայտնաբերված գումարները[1]./հազ. դրամ/

	2014		2015		2016	
Ստուգումների տեսակ	Ստուգումների քանակ	Հայտնաբերված գումար մլն.դրամ	Ստուգումների քանակ	Հայտնաբերված գումար մլն.դրամ	Ստուգումների քանակ	Հայտնաբերված գումար մլն.դրամ
Իրականացված ստուգումներ այդ թվում	291	1223468,7	299	997867,9	391	556730,2
Բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում(ԲՍ)	203	1208164,7	206	978581,5	243	534824,7

[1]http://www.tax.nk./am/

ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգում (ՀԴՄ)	48	3750,0	17	1500,0	69	4860,0
Այլ ստուգումներ	40	11554,0	76	17786,4	79	17045,5

2014թ ստուգումների ընդհանուր քանակի 16,9%-ը կազմում են ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգումները, որոնց ընթացքում հայտանաբերվել է 3,8 մլն դրամ, որը կազմում է ընդհանուրի 0,3%-ը, 13,7%-ը կազմել են հարկային այլ խախտումների հայտնաբերման ստուգումները, իսկ 69,8%-ը՝ բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգումները: Ստուգումների թվաքանակի կրճատմանը զուգահեռ 2009 թվականի հուլիսի 1-ից գործարկվում է նաև կամերալ ուսումնասիրությունների իրականացման համակարգը, որի շնորհիվ հարկ վճարողները տեղեկանում են հաշվարկ-հաշվետվություններում կատարած սխալներին, հնարավորություն ստանում կատարել ճշգրտումներ՝ խուսափելով հետագայում ստուգումներով կիրառվելիք տուգանքներից: 2016 թվականին իրականացվել են 1584 եռամսյակային և 2176 տարեկան հաշվետվությունների կամերալ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կազմվել են 876 արձանագրություններ (հայտնաբերվել են խախտումներ) և տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվել են 824 ճշգրտված հաշվարկ-հաշվետվություններ: Էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկմամբ այժմ հնարավորություն է ընձեռվում կամերալ ուսումնասիրությունները կատարել 80 տոկոսից ավելի հարկ վճարողների մոտ: 2017 թվականի 2-րդ եռամսյակի տվյալներով էլեկտրոնային եղանակով հաշվարկ-հաշվետվություններ են ներկայացնում 2860 տնտեսավարող սուբյեկտներ, որը կազմում է ընդհանուրի 70.2 տոկոսը, և 2017 թվականի 6 ամիսներին իրականացվել են 3044 եռամսյակային կամերալ ուսումնասիրություններ: Հաշվետվությունը լրացնելիս համակարգը ինքնաբերաբար լրացնում է նախորդ ժամանակաշրջանի տվյալները, կատարում թվաբանական գործողություններ, ստուգում հաշվետվության ճիշտ լրացված լինելը: Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը թույլ է տալիս ժամանակին արձագանքել և բաց չթողնել փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել հաշվետվությունների ձևերում և դրանց լրացման կարգերում, տնտեսավարող սուբյեկտներին թույլ են տալիս խուսափել լրացուցիչ հարկային պարտավորություններից: Այդ են վկայում 2017 թվականին կատարված կամերալ ուսումնասիրությունների արդյունքները՝ 2536 եռամսյակային կամերալ ուսումնասիրությունների արդյունքում կազմվել են ընդամենը 450 արձանագրություններ, որոնցից ճշգրտված հաշվարկ-հաշվետվություններ ներկայացվել են 444-ը:

Հարկային ոլորտում հանրային հսկողության դերակատարությունը բարձրացնելու նպատակով հրապարակվում են տեղեկություններ ոչ միայն խոշոր հարկային իրավախախտումների, այլ նաև դրանց նկատմամբ հարկային մարմնի կողմից կիրառված գործողությունների, պատասխանատվության միջոցների մասին, որը կնպաստի հարկից խուսափող կազմակերպությունների թվաքանակի փոքրացմանը և հարկային մշակույթի զարգացմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոշոր հարկատուներն ապահովում են բյուջեի հարկային մուտքերի հիմնական մասը, անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել խոշոր բիզնեսի լիարժեք և ամբողջական, իրական ծավալներով հարկմանը: Խոշոր գործարարների կողմից հարկային պարտավորությունների կատարումն էականորեն կնպաստի հարկային համակարգի կայացմանն ու զարգացմանը:

Վերլուծելով ԼՂՀ հարկային եկամուտների աճի միտումները և դրանց կազմում խոշոր հարկ վճարողների մասնաբաժինը 2011-2015թթ կտրվածքով՝ կարելի կատարել հետևյալ եզրահանգումները.

Աղյուսակ 2

ԼՂՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում առաջին 100 և առաջին 10 հարկ վճարողների մասնաբաժինները[1]

N	Ցուցանիշները	Չափի միա-վորը	Տարիներ				
			2011	2012	2013	2014	2015
1	Պետբյուջեի հարկային եկամուտներ, պարտադիր սոցապահովության վճարներ և պետական տուրքեր, այդ թվում՝	մլն դր.	23722.6	26187.4	26241.2	30118.7	33175.5
2	առաջին 100 հարկ վճարողներ	մլն դր.	12414.7	11524.8	12333.9	18921.2	16807.8
3	առաջին 10 հարկ վճարողներ	մլն դր.	8678.1	7424.7	7491.2	9970.1	10014.4
4	առաջին 100 հարկ վճարողների տեսակարար կշիռը	%	52.3	44.0	47.0	62.8	50.7
5	առաջին 10 հարկ վճարողների տեսակարար կշիռը	%	36.6	28.4	28.5	33.1	30.2

Դիտարկվող ժամանակաշրջանում (2011-2015թթ) հարկային եկամուտներում, պարտադիր սոցապահովության վճարներում և պետական տուրքերում առաջին 100 և առաջին 10 հարկ վճարողների մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 51.4% և 31.4%: Ուսումնասիրելով հարկային մարմնի կողմից հարապարակվող առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ 2015-2016թթ ցանկերը, կարելի է անել նույն հետևությունը. առաջին 300 խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի և տուրքերի մեծությունը կազմում է ընդհանուր հարկային եկամուտների 58,9 տոկոսը, իսկ 2016 թվականին՝ այդ ցուցանիշը կազմել է 63,2 տոկոս: Ցուցանիշները վկայում են տնտեսության զգալի չափով կախվածությունը խոշոր հարկ վճարողներից և փոքր ու միջին ձեռնարկատիրության թեթև մասնաբաժինը հարկային մուտքերի կառուցվածքում: Կարևորելով մեր հասարակության զարգացման մեջ բարոյական արժեքների դերը, կարելի է ասել, որ նույնիսկ փոքր տնտեսավարող սուբյեկտները, յուրաքանչյուր եռամսյակում պայքարում են առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկում տեղ գտնվելու համար:

Հարկային բեռը հասարակության մեջ հարկերի դերը բնութագրող ցուցանիշ է:

Աղյուսակ 3

Հարկեր/ՀՆԱ[2] հարաբերակցությունը 2010-2016թթ

Ցուցանիշները	**Տարիներ**						
	2010թ.	**2011թ.**	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**2016թ.**
ՀՆԱ(շուկ. գներով) (մլն դրամ)	118187,2	135498,5	150015,7	168563,6	188840,3	209345,7	229651,6
Հարկային եկամուտներ (մլն դրամ)	15122,3	16659.8	18534.5	17884.4	29795,7	32744,3	31885,0
Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ (%)	12,8	12,3	12,3	10,6	15,8	15,6	13,9

[1]ԼՂՀ ՀՊԾ պաշտոնական կայք http://tax.nk.am հրապարակվող տեղեկություններ

2ԼՂՀ ՀՊԾ պաշտոնականկայք http://tax.nk.am հրապարակվող տեղեկություններ

Գծապատկեր 2

ՀՀ և ԼՂՀ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից ՀՀ-ում հարկեր/ՀՆԱ վերջին հինգ տարվա միջին ցուցանիշը գերազանցում է ԼՂՀ համապատասխան ցուցանիշը: ԼՂՀ-ում հարկային մուտքերի և ՀՆԱ հարաբերակցությունն նվազում է 2010-13թթ. ընթացքում, աննշան աճ արձանագրվել է 2014թ. արդյունքներով, կազմելով՝ 15.9%, այնուամենայնիվ, զիջելով Հայաստանի միջին ցուցանիշին: Համեմատելով նշված ցուցանիշները մի շարք առաջադեմ պետությունների համապատասխան ցուցանիշների հետ կարելի է եզրահանգել, որ խնդիրը ոչ այնքան հարկային ցածր բեռի, այլ դրա անհավասարաչափ բաշխման մեջ է: Եկամուտների և տարբեր տարիների ՀՆԱ-ի հարաբերությունը Ռուսաստանում կազմում է 28-30%, մերձբալթյան երկրներում՝ 30-35%: Եվրամիության երկրներում 2009թ. այս ցուցանիշը կազմել է համապատասխանաբար. Չեխիայում՝ 34.5%, Բուլղարիայում՝ 28.9%, Հունգարիայում՝ 39.5%, զարգացած երկրներից Ֆրանսիայում՝ 41.6%, Իտալիայում՝ 43.1%: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության միջին ցուցանիշը Եվրամիության 27 երկրների համար 2009թ. կազմել է 38.4%, որը գրեթե 1.5 անգամ գերազանցում է Հայաստանի Հանրապետության ներկա ցուցանիշը[1]: Դա ունի իր բացատրությունը. ԼՂՀ-ում ներքին համախառն արդյունքի կառուցվածքն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք իրենց անդրադարձն են ունենում հարկաբյուջետային որոշ ցուցանիշների և, մասնավորապես, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա: Գոյություն ունեն ՀՆԱ-ի այնպիսի ճյուղեր, որոնք էականորեն բարձրացնում են ՀՆԱ-ի մեծությունը, սակայն հարկեր գրեթե չեն վճարում (օրինակ, գյուղատնտեսությունը, որի արտադրանքի ծավալը մասանվորապես 2009թ. կազմել է ՀՆԱ-ի 13,7%-ը, 2010թ.՝ 11,1%-ը, 2011թ.՝ 12,6%-ը, 2012թ. 14,3%-ը: ՀՀ–ում արտոնությունների այդպիսի ինստիտուտ չի կիրառվում: Պատերազմական գոտում նման մեղմ հարկային դաշտը, կարծում ենք, կբարձրացնի երկրի ներդրումային գրավչության մակարդակը, հայրենական տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Ընդգծելով հարկային համակարգի և գործարար միջավայրի փոխառնչությունը, կարող ենք նշել, որ պետության կողմից իրականացված այսպիսի հարկային համակցված միջոցառումների համակարգը կապահովի տնտեսական հավասարակշռվածություն և կայունություն, կնպաստի

[1] http://epp.eurostat.ec.europa.eu/statistics_explained/index.php/Europe_in_figures_-_Eurostat_yearbook

գործարար միջավայրի ու ներդրումային ակտիվացմանն, առանձին տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների այցելությունների կազմակերպման կանոնակարգ
2. Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգ
3. http://tax.nk.am/
4. http://www.arlexis.am/, ԼՂՀ իրավական տեղեկատվական համակարգ

Տեղեկություններ հեղինակի մասին.
Լիլիկ Բեգլարյան,ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ավագ դասախոս, տ.գ.թ.
էլ. փոստ. հասցե՝ beglaryan.lilik@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը: